

Եւ կը խորհիմ թէ քընաստ ես եւ նօթի
Իրանդ հովէն կը դողայ.
Եւ կը նըստի գանգուրներուդ վըրայ, քոյր,
Եղեամն իբրեւ շափիւղայ,

Ես կը խորհիմ, եւ խենթի պէս կը բաղձամ
Վար իջնել, քոյր դակկադէմ,
Քովդ իջնել, համբուրել ձեռքըդ նիհար,
Եւ հըծծել «քեզ կը սիրեն»...:

Յուսահատութիւնն ալ այնքան խորն է իր մէջ որքան միւս զգացումները. իր անյոյս տողերուն մէջ Լէօբարտին ու Եղիան կը յիշէցնէ, ու պահ մը այնպէս կը թուի թէ իր սուգն ալ, ինչպէս իր թախիծը՝ անտնցիկին նման ծննդական է. *Տրտունջքը* եւ *Լքումը* կուտան մեզի ծանոթութիւնը այդ յուսահատութեան. *Լքումէն* քանի մը տող.

Ո՛չ ոք, ո՛չ ոք գիտէ վիշտն՝
Որ թոքերուս մէջ, զերդ խաշխաշ թունաբեր
Արագօրէն կ'ուռճանայ.
Ո՛չ ոք գիտէ թէ ի՞նչ կերպ
Յուսահատութիւն օրէ օր գիս մահուան հետ
Կ'ընտելացնէ, թէ կ'երթամ ի՞նչ ճամբայով
Կեանքիս մոխիրն եւ իմ ափին մէջ կըջռել...:

Եւ՝

Այսպէս խաղաղ իրիկուն մ'երբ տնակին մէջ
Մայրս կ'երգէ, ըզբաղած:
Մահուան սաստիկ ծարաւէն՝
Չը դընելով ուշ եզերքիդ բաղեղին՝
Որ գըթոյթեամբ պիտի կառչի քըղանցքիս,
Պիտի նետեն մարմինս այս խոնջ, կարեկլեր
Խորհուրդիդ մէջ...: